

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ IRZ-Ի ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ՝ «ՓԱՍՏԱԲԱՆԸ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱԴԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ

20.08.2020 10:43



Հարգելի՛ փաստաբաններ,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) հետ համատեղ կազմակերպում է փաստաբանների վերապատրաստման առցանց դասընթաց՝ **«Փաստաբանը և հանրային կապերը»** թեմայով:

Վերապատրաստման դասընթացի շրջանակներում գեկույցներով հանդես են գալու **գերմանացի փորձագետներ՝ փաստաբան և լրագրող Ուլրիխ Հերմանսկին և փաստաբան դոկտոր Ստեֆանի Քուլնցը**, ինչպես նաև **ՀՀ փաստաբանների պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանը**:

Դասընթացը կազմակերպվում է երկու անգամ (նույն օրակարգը 2 օր)՝ 2020 թվականի օգոստոսի 24-ին և 25-ին, ժամը 11:30-ից 16:30-ն:

Դասընթացն անցկացվելու է վերապատրաստման հատուկ առցանց համակարգով՝ հայերեն և գերմաներեն լեզուների համաժամանակյա թարգմանությամբ:

Դասընթացին մասնակցությունը յուրաքանչյուր փաստաբանի համար կհաշվարկվի 8 (ութ) ակադեմիական ժամ վերապատրաստում:

Դասընթացի յուրաքանչյուր օրվան (24.08.2020թ. և 25.08.2020թ.) կարող են մասնակցել **ոչ ավել, քան 40 (քառասուն) փաստաբան**: Նախապատվությունը կտրվի դասընթացին ավելի վաղ գրացված փաստաբաններին: Դասընթացին գրանցվելու համար կարող եք էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկել **ani.gharibyan@advocates.am** էլ. հասցեին՝ նշելով Ձեր անունը, ազգանունը, արտոնագրի համարը և դասընթացի օրը:



Ուշադրություն. ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ ԳՐԱՆՑՎԵԼ, ԵՔԵ ՎՍԱՀ ԵՔ, ՈՐ ԿԱՐՈՂ ԵՔ ԴՐԱՆ ԺԱՄԱՅԻՆ ԱՌՈՒՄՈՎ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԱՄՐՈՂՋ ԾԱՎԱԼՈՎ:

Առդիր՝ դասընթացի օրակարգը

Առաջարկվող նորություններ



21.01.2016 ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է
ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ՓՈՐՁԻ
ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ



05.09.2016
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ՝ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐՁԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ
ՀԱՄԱՐ



05.09.2016
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ՝ ԼՈՌԻՈՒ ՄԱՐՁԻ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ



05.09.2016
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ՝ ՏԱՎՈՒՇԻ
ՄԱՐՁԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ
ՀԱՄԱՐ

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })